**Ծանուցում**
**«ՀԿԵ» ՓԲԸ-ի Գյումրու տարածքում հյուրանոցային ծառայությունների կազմակերպման տարածքի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի մասին**
**Գնանշման հարցում**
**№ ՀԿԵ-ԳՀ022/084**

| կ/կ | Գնման գործընթացի չափանիշներ | Գնման պայմաններ |
|---|---|---|
| 1. | **Գնման տարբերակ** | **Գնանշման հարցում թղթային տարբերակով** |
| 2. | Գնման գործընթացի կազմակերպողի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն, էլեկտրոնային հասցեն, կոնտակտային հեռախոսահամար | Կազմակերպող՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Նյութատեխնոլոգիական ապահովման տնօրինություն (հետագայում՝ «ՀԿԵ» ՓԲԸ ՆՏԱՏ)<br>Գտվելու վայրը՝ ք.Երևան, Արցախի պող., 32<br>Փոստային հասցե՝ 0005, ք.Երևան, Արցախի պող., 32<br>Էլեկտրոնային փոստ՝tender@railway.am<br>Կոնտակտային հեռախոս՝ +374 (60) 46-31-74 |
| 3. | Գնման գործընթացի առարկան: | «ՀԿԵ» ՓԲԸ-ի Գյումրու տարածքում հյուրանոցային ծառայությունների կազմակերպման տարածքի վարձակալություն: |
| 4. | Գտնվելու վայրը: | Վարձակալության տրամադրվող շինությունները գտնվում են Գյումրի քաղաքում, կայարանին կից հրապարակ 1:<br><br>Վարձակալության ենթակա տարածքի մակերես 394 մ². |
| 5. | Պայմանագրի մեկնարկային (նվազագույն) գինը (չափաբաժնի գինը) կամ ապրանքի միավորի, աշխատանքի, ծառայության արժեքը | Պայմանագրի մեկնարկային (նվազագույն) գինը կազմում է՝ 809 499 (ութ հարյուր ինը հազար չորս հարյուր իննսունինը) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ: |
| 6. | Գործընթացի հաղթող | Գնանշման հարցման հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին: |
| 7. | Կնքված պայմանագրով վճարման պայմանները | Գնորդը վճարում է անկանխիկ հաշվարկով ՝ փոխանցելով դրամական միջոցները հաշվարկային հաշվին: Կանխավճար նախատեսված չէ. Վարձակալական վճարն ամբողջությամբ փոխանցվում է Վարձատուի հաշվին ՝ Համաձայն կնքված պայմանագրի պայմանների, հաշիվ/ապրանքագիր տրամադրելուց հետո ՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: |
| 8. | Գնման գործընթացի փաստաթղթերի տրամադրման ժամկետը, տեղը և կարգը | Փաստաթղթերը տեղադրվում են «ՀԿԵ» ՓԲԸ կայքում: |

| | | |
|---|---|---|
| | | Փաստաթղթերը հասանելի են «ՀԿԵ» ՓԲԸ կայքում առանց սահմանափակումների հրապարակման պահից: |
| 9. | Գնմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի սկզբի կարգը, ամսաթիվը և ժամկետը: | Հայտերը ներկայացվում են երկու փակ ծրարներով՝ «Բնօրինակ» և «Պատճեն» հստակ մակնշմամբ:<br>Հայտերի ներկայացման մեկնարկի ամսաթիվը՝ կայքում ծանուցման հրապարակման պահից<br>«05» օգոստոսի 2022թ. 9: 00 -18:00<br>Հայտի ներկայացման վերջնաժամկետը՝<br>«18» օգոստոսի 2022թ. 9 : 00 -18:00<br>Ծրարները՝ մինչև գնումների կազմակերպչին հանձնելը (Արցախի 32, ՆՏԱՏ, սենյակ 212 հասցեով) ենթակա են գրանցման "ՀԿԵ" ՓԲԸ անվտանգության ծառայության կողմից (Տիգրան Մեծի 86 հասցեում, Երևան կայարան): |
| 10. | Տեղեկատվություն՝մրցակցային գնումների փաստաթղթերում նշված պահանջներին չբավարարելու մասին | Պատվիրատուն կարող է մերժել գնանշումների հայտերը հետևյալ դեպքերում.<br>1) գնանշման հայտը չի համապատասխանում գնանշումների հարցման մեջ նշված պահանջներին;<br>2) պայմանագրի գնի (չափաբաժնի գնի) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի գնի վերաբերյալ գնանշման հայտում առաջարկությունը գերազանցում է պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (չափաբաժնի գինը) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի սկզբնական (առավելագույն) գինը (եթե այդպիսի գին սահմանված է);<br>3) հրաժարվում է գնանշումների հարցման անցկացումից;<br>4) մասնակցի կողմից գնանշման հայտի դրույթների վերաբերյալ պարզաբանումներ չներկայացնելը (պատվիրատուի պահանջի առկայության դեպքում): |
| 11. | Գործընթացից հրաժարվելու իրավունքը | Կազմակերպողն իրավունք ունի հրաժարվել գնման գործընթացից ցանկացած պահին՝ մինչև հայտի դիտարկումը և մասնակցության իրավունքի տրամադրումը, որևէ պատասխանատվություն չկրելով ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց առջև, որոնց նման գործողությունը կարող է վնաս պատճառել, ինչպես նաև փոփոխել գնման գործընթացի անցկացման |

| | | |
|---|---|---|
| | | վերաբերյալ ծանուցումը հայտերի ներկայացման վերջնաժամկետից 1 օր առաջ: |
| 12. | Պայմանագրի կնքման ժամկետը | Գնման գործընթացի արդյունքներով կազմված մրցութային հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության ստորագրման օրվանից հաջորդող 10 օրվանից ոչ շուտ և 20 օր ոչ ուշ: |